

ցոյց կու տան անգիր գերեզման մըն ալ, բսելով թէ Յ. Երզնկացիինն է: Զայս կը հաստատէ նաև Յովհ. Սսկերիչեան իր «Հաւաքումն արձանագրութեանց» ձեռագիր գործին մէջ բսելով թէ «բստ ասից Հաղբատացոց և ցուցանելոյ՝ էր գերեզման մի առաջի զանգակատան որ ասէին թէ Սարկաւազ վարդապետին է... Զորս քայլ հեռի ցուցին գերեզման մի կարճ և անշուք քարիւ թէ Յոհան Պլուզ վարդապետին է, և այն անգիր<sup>1</sup>»: Այս վկայութեանց հակառակ է սակայն Յակոբ Կարնեցիի աւանդածը «Տեղագրութիւն Վերին Հայոց» գործին մէջ, ուր կ'ըսէ որ Երզնկայի մէջ կային հինգ եկեղեցի և «... դամբարան սրբոց վարդապետաց Յովհաննէս Պլուզի»... ևն: Երզնկացիներու աւանդութիւնն ալ նոյնը կը վկայէ և ասոր արձագանգ կ'ըլլայ Կիրակոս Ղազանճեան, որ խօսելով Երզնկայի Ս. Նշան եկեղեցւոյն վրայ կ'ըսէ. «Այս եկեղեցւոյ մէջ Յովհան Երզնկացւոյ դամբանը կայ, որոյ տապանաքարին վրայ գրուած է: Այս և տապան հանգստեան Յովհան Պլուզ ծործուրեան, էր վարդապետ ձարտատան<sup>2</sup>...»: Այսպէս անգիր և անգարդ գերեզմանի մը դէմ ունինք ուրիշ մը յատուկ տապանագիրով Երզնկայի մէջ, և ամէն հաւանականութեամբ բուն Յովհաննու դամբանն ըլլալու է: Երզնկացի մեծահամբաւ իր դարու վարդապետներու մէջ, որու «քաջութեանն և սրբութեանն վկայեն ամենայն ծրագրեալ գրեանքն և մեկնութիւնը և սքանչելիք սուրբ գերեզմանոյն», Մ. Ապարանեցիին համեմատ, կարելի չէր որ խեղճ և անգիր գերեզման մ'ունենար: Սակայն իր բուն փառքը կազմողը իր գրական գործերն են, զանազանեալ իրենց նիւթով և նշան տաղանդին բազմակողմանի ըլլալուն և կը ցու-

ցընեն նաև թէ ինչպէս այնուհետև հայ միտքը իրեն կապ և սահման պիտի չունենայ, այլ պիտի ընդգրկէ ինչ որ լաւ տեսնէ ըլլայ ժողովրդեան կեանքին մէջ, ըլլայ օտար ազդեցութիւններու մէջ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԲԱՌԱՔՆ. ՆՈՐ ՇԱՐՔԻՆ

Ա. ՌԹԻԻ

(տ. չամդ. Ամս. 1929, Ապրիլ)

Հանդես Ամսօրեայ, թ. 4, էջ 245-51, հայ լեզուի լուսարանութիւններ տալու նպատակաւ՝ նոր էջ մը բացեր է: Կը փութամ ես ալ նախ յաջողութիւն մաղթել այդ գեղեցիկ ձեռնարկին, և թէ պէտք լինի, ուղիղն, ըստ կարելոյն, թելադրելու մտքով, փոքր դիտողութիւն մ'ընել:

Առաջին յօդուածը եօթը բառ կ'ընդգրկէ, որոց չորսը սխալ հասկցուած են (թ. 3, 5, 2, 6), երկուքը (թ. 1, 7) լուկ քաջքշուած չարչրկուած են՝ առանց նոր բան մ'ըսելու, մէկ հասն ալ (թ. 4) բաւական լաւ է:

Կարգաւ պարզենք. կը մեղադրուի Հայկզ. բառգ. 3 թուով, սասար և սասարիւն «դասական հնութիւն» ունեցող բառերը նշանակած չըլլալուն: Նախ բսեմ որ այդ երկուքին պակասը հայ լեզուին ոչ մի վնաս կը բերէ. և թէ նշանակուած ևս ըլլային՝ անգործածելի պիտի մնային, Եզնիկի մակերդու կամ մակերդու բառին նման: Յունարէն, կամ լաւ ևս լատիներէն բառեր են, որոնց ոսկեղարեան հարագատ թարգմանութիւնը նշանակած է Հայկզ. (զանգ, լումայ) և զիրենք թողած: Ուստի այնքան յանցաւոր է ասոր մէջ Հայկազեանը, որքան յանցաւոր պիտի ըլլար այսօր աշխարհաբար բառգրքի մը հեղինակը՝ որ ի բաց թողուր իտեայ, մկրտո, տոքթար, փրոֆեսոր, փրորիք, նորս ևն բառերը: Հայկազեանը հայերէնի համար շինուած է, միւս բառերը բոլորովին պատահական կերպով կրնայ յիշել կամ ոչ:

Նոյնպէս յիշեալ բառերուն մէջ չեմ հաս-

1. Տաշեան, Մայր Յուրակ, էջ 984.  
 2. Կ. Ղազանճեան, Խոսն նամակներ, Կ. Պոլիս, 1887, էջ 14: Սոյն գերեզմանը առաջնորդի աթոռի ներքեւը չէ, ինչպէս կը զրէ Սրուանձառանց Թորոս Աղբաբի մէջ էջ 48-49. գերեզմանը զատ է աթոռն. առաջին եկեղեցւոյն դրան քովն էր և նորին շինութենէն յետոյ փոխադրուած է հոս: